



Աղտոտման կանխարգելումը բուժքույրերի համար

Այսօրվա առողջապահությունը խիստ տարբեր և անժխտելիորեն ավելի բարվոք է, քան նախկինում: Սակայն ցավալի իրողություն է այն, որ ներկայիս բուժքույրերը և առողջության խնամքն իրականացնող այլ մասնագետներ, փրկելով մարդու կյանքը և հոգ տանելով նրա առողջության համար, միևնույն ժամանակ անգիտակցաբար մեծ վնաս են հասցնում իրենց շրջակա միջավայրին և մարդկանց: Վնասի աղբյուրը հիվանդանոցային թափոնների այն հսկայական քանակությունն է, որ գոյանում է ամենօրյա աշխատանքի ընթացքում, իսկ ավելի ստույգ, այն թունավոր ազեոններն /ազդակներն/ են, որոնք առաջանում են թափոնների այրումից:

Բժշկական թափոնների այրումը շրջակա միջավայր դիօքսինի և սնդիկի ներթափանցման ամենագլխավոր պատճառներից է: Այն տեխնոլոգիաները, որոնք նախատեսված են ենթադրյալ կենսաբանական վտանգներից մարդկանց պաշտպանելու համար, այժմ դարձել են քիմիական աղտոտման աղբյուր:

Դիօքսինը կայուն և խիստ թունավոր քիմիկատ է: Դիօքսինի ամենից թունավոր ձևը 2,3,7,8-տետրաբլորդիբենզո-պ-դիօքսինն է կամ այսպես կոչված ՏՔԴԴ-ն: Մի շարք քիմիկատներ իրենց թունայնությամբ նման են ՏՔԴԴ-ին, բայց ավելի պակաս թունավոր են: 75 քլորացված դիբենզո-դիօքսիններից յոթը օժտված են ՏՔԴԴ-ի նմանատիպ թունայնությամբ: Դիօքսինը ենթադրյալ քաղցկեղածին ազեոն է: Այն բացասաբար է անդրադառնում կենդանիների

վերարտադրողականության և զարգացման վրա նույնիսկ ամենափոքր չափաքանակով ազդելիս: Դիօքսինը վնասում է նաև իմունային համակարգը, մեծացնում է վարակիչ հիվանդությունների նկատմամբ ընկալունակությունը: Այն կարող է քայքայել նաև հորմոնների ֆունկցիան, որոնք այնքան անհրաժեշտ են օրգանիզմի աճի և կարգավորման համար:

Դիօքսինն առաջանում է ոչ միայն բժշկական թափոնների, այլև սովորական աղբի այրումից, ինչպես նաև ցեմենտի արդյունաբերական վառարանների, մետաղածուլարանների, փայտի այրման և էթիլ բենզինով աշխատող փոխադրամիջոցների պատճառով: Հայտնվելով օդում, դիօքսինն անցնում է նաև հողի ու ջրի մեջ, և, վերջապես, սննդային շղթա լուրջ վտանգ ներկայացնելով մարդկանց համար:

Դիօքսինը կուտակվում է ճարպային հյուսվածքներում: Կանայք կրծքով կերակրելիս իրենց երեխաներին են փոխանցում կրծքի կաթի ճարպերում կուտակված դիօքսինը: Երեխաները, փաստորեն, դիօքսինի գլխավոր չափաքանակը ստանում են իրենց աճի և զարգացման կրիտիկական շրջանում:

Սնդիկը ներտոքսին է, որը կուտակվում է մկանային հյուսվածքներում: Տարիներ շարունակ բուժքույրերն օգտագործում են սնդիկ պարունակող ջերմաչափեր, արյան ճնշումը չափող գործիքներ, Միլլեր-Աբրոթի խողովակներ և այլ բժշկական սարքեր: Տեղյակ լինելով սնդիկի խիստ վտանգավորության մասին, բուժքույրերը կարող են և նույնիսկ պարտավոր են հետևել, որպեսզի սնդիկ պարունակող թափոնները հավաքվեն առանձին, և հնարավոր ամեն ինչ արվի սնդիկից զերծ աշխատավայր ապահովելու համար:

Առհասարակ սնդիկ պարունակող սարքերի պահպանումը պահանջում է հատուկ ուսուցում թափված սնդիկի կառավարման, սնդիկ պարունակող սարքերի մատակարարման և անհրաժեշտության դեպքում դրանց ոչնչացման վերաբերյալ: Ոչ մի պարագայում չի թույլատրվում սնդիկը թափել դրենաժային խողովակի, ասեղների տուփի, ծակող գործիքների տարայի կամ աղբարկղի մեջ: Բուժքույրերը պետք է հոգան նաև իրենց անձնական պաշտպանության համար: Ջերմաչափի կտրվելու կամ սնդիկ պարունակող լուծույթի թափվելու ժամանակ ներշնչած սնդիկի 80%-ը կարող է թափանցել արյան մեջ: Կարճատև ազդեցության հետևանքով կարող է առաջանալ թունավորում, թոքերի բորբոքում, բրոնխիտ և բրոնխոլիտ: Համեմատաբար ցածր մակարդակի վնասումներով սնդիկի կրկնվող ազդեցությունները կարող են հանգեցնել մկանային դողի, դյուրագրգռության, լնդերի բորբոքման և այլն: Նյարդային վնասվածքի պատճառով ձեռքերն ու ոտքերը կորցնում են

զգայունակությունը, դժվարանում է քայլքը, խոսքի արտաբերումը դառնում է ոչ հստակ: Սնդիկն ազդում է նաև պտղի ներարգանդային կյանքի և մանկան զարգացման վրա: Սնդիկը բնական տարր է, որը հանդիպում է ժայռերում, հողում, ջրում, օդում և կենդանի օրգանիզմներում: Սնդիկը հաղորդում է էլեկտրականություն, չափում է ջերմությունը և ճնշումը, գործում է որպես կենսասպան նյութ և արդյունաբերական կատալիզատոր: Սնդիկը կարող է պինդ նյութից հեշտությամբ վերածվել գազի, նաև հեղուկի: Վտանգավորության չափը կախված է սնդիկի չափաքանակից և ազդեցության հաճախականությունից:

Աշխատավայրում սնդիկային աղտոտումը կանխելու համար կարելի է սնդիկային հիմքով տեխնոլոգիաները գործառնությունից հանել և դրանք փոխարինել թվային ջերմաչափերով, արյան ճնշումը չափող անսնդիկ սարքերով կամ մոնիտորինգի թվային միջոցներով:

Առողջապահական հիմնարկների բոլոր բաժանմունքներում օգտագործվում են տարբեր չափի և քիմիական կազմության մարտկոցներ՝ հիմնային, կապարաթթվային, նիկելակադմիումական, սնդիկային, լիթիումի, չոր և այլն: Մարտկոցները չի կարելի նետել սուր գործիքների տարաների կամ ասեղների տուփի մեջ: Որոշ տեսակի մարտկոցներ կարելի է կրկին օգտագործել: Մարտկոցներն անհրաժեշտ է հավաքել մնացած թափոններից առանձին: Դրանց ոչնչացման համար պետք է դիմել կոշտ թափոնների գծով համապատասխան մարմիններին:

Առողջապահական հիմնարկներում հաճախակի են օգտագործվում լուսարձակիչ /ֆլուորեսցենտային/ լամպեր: Յուրաքանչյուր այդպիսի լամպում կա այնքան սնդիկ, որքան 400 և ավել մարտկոցներում միասին վերցրած: Այդպիսի լամպերն անհրաժեշտ է պահել մեծ զգուշությամբ և չվնասել նախքան ոչնչացնելը:

Վարակիչ և կենսաբանորեն վտանգավոր թափոնների հավաքման համար օգտագործվող կարմիր պարկերի և ոչնչացման ենթակա ասեղների տուփերի այրումը կարող է կադմիումի առաջացման պատճառ դառնալ: Անհրաժեշտ է հետևել, ըրպեսզի աշխատավայրում օգտագործվող կարմիր պարկերը և սուր գործիքների տարաները լինեն կադմիումից զերծ: Որոշ ընկերություններ կադմիումը, որը, ինչպես հայտնի է, ծանր մետաղ է, օգտագործում են որպես ներկանյութ այդպիսի պարկերի և տուփերի արտադրության համար: Բժշկական թափոնների այրումից առաջացած կադմիումի արտանետումները շրջակա միջավայրի աղտոտման հիմնախնդիրներից է:

Բուժհիմնարկում կենսաբանորեն վտանգավոր թափոնների քանակը կարելի է նվազեցնել թափոնները զգուշությամբ և խնամքով առանձնացնելու միջոցով: ԱՆհրաժեշտ է հետևել, որպեսզի կենսաբանորեն վտանգավոր թափոնների տարաները տեղակայված չլինեն այնպիսի վայրերում, որտեղ դրանք կարող են լցվել ոչ վարակիչ և կենսաբանորեն ոչ վտանգավոր թափոններով: Այնպիսի նյութեր, ինչպիսիք են փաթեթանյութը, թղթ սրբիչները և այլ կոշտ թափոններ, պետք է նետել աղբարկղը:

Հարկավոր է պարզել կենսաբանական վտանգ ներկայացնող թափոնների ոչնչացման եղանակը: Գոյություն ունեն մշակման շատ տեխնոլոգիաներ, որոնք մատչելի են այդ տեսակ թափոնների համար՝ վառարաններ, ավտոկլավներ, միկրոալիքային վառարաններ և էլեկտրաջերմային ապասկտիվացում: Հնարավորության դեպքում հարկավոր է խուսափել այրումից, բացառությամբ այն թափոնների, որոնք կարելի է մշակել միայն այդ տեխնոլոգիայով: Դեղորայքային թափոնների նվազեցման կարելի է հասնել դեղորայք մատակարարող ընկերություններից միայն սպառման համար անհրաժեշտ քանակությամբ դեղորայք գնելու միջոցով: Հարկավոր է խրախուսել մատակարար ընկերություններին «ետ վերցնել» ժամկետանց կամ չօգտագործած նմուշները: Եթե չի հաջողվում այդպիսի ռազմավարություն իրականացնել, ապա ոչ անհրաժեշտ դեղորայքը կարելի է նետել ասեղների տուփի կամ սուր գործիքների տարայի մեջ: Դեղորայքը, հատկապես հորմոնալ դեղամիջոցները և նարկոտիկները, չի կարելի թափել զուգարանում:

Բուժքույրերը հիվանդանոցի աշխատակազմի զգալի մասն են կազմում և, հետևաբար, կարող են վճռորոշ դեր կատարել իրենց բուժհիմնարկի համար անհրաժեշտ գնային քաղաքականությունը մշակելիս: Ուշադրություն պետք է դարձնել փաթեթավորման եղանակի վրա, հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյոք բաղադրամասերը կարելի է կրկին դնել շրջանառության մեջ: Օր.՝ հնարավորության դեպքում նախընտրելի է ձեռք բերել վերալիցքավորվող մարտկոցներ, կադմիումից զերծ պարկեր և ասեղների տուփեր, մարտկոցով աշխատող ջերմաչափեր և արյան ճնշումը չափող անսնդիկ /աներոիդ/ սարքեր սնդիկային հիմքով ապրանքների փոխարեն: Պետք է նվազեցնել քլորացված պլաստիկ նյութերի օգտագործումը:

Թափոնների ոչնչացման համար նախապատվությունը պետք է տալ ավտոկլավային կամ ցանկացած այլընտրանքային տեխնոլոգիային: Սա հատկապես կարևոր է պոլիվինիլ քլորիդ պարունակող իրերի ոչնչացման համար:

Source: Vermont Registered Nurse
Official Publication of Vermont State Nurses' Association, Volume 62 Number 4

